ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«14» 04 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000035

Ձեռնարկողը՝ ***«Ա-Քարավան» ՍՊԸ***
Արագածոտնի մարզ, Կաքավաձոր համ.

Գործունեությունը՝ ***Կաքավաձորի փուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000035

<< 14 >> 04 2020թ.

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Պատվիրատու՝	«Ա-Քարավան» ՍՊԸ
Նախագծող՝	«Ա-Քարավան» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	- Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն, - նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնք

Հայցվող տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում և տեղակայված է Կաքավաձոր համայնքում: Ամենամոտ զգայուն կլանիչները գտնվում են համայնքի հյուսիսային մասում՝ մոտ 1.1կմ հեռավորության վրա: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է դիաբազային տուֆերով, արթիկի տիպի տուֆերով, հրաբխային խարամներով, անդեզիատաբազալտներով և ժամանակակից նստվածքներով: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության «արոտա-վայրեր» գործառնական նշանակությամբ հողերով:

Կաքավաձորի հրաբխային տուֆերի հանքավայրի տարածքը գտնվում է 1750-1770մ բացարձակ բարձրությունների վրա՝ հետևյալ կոորդինատներով.

1.	X=4470360	Y=8419177	5.	X=4470278	Y=8419293
2.	X=4470403	Y=8419283	6.	X=4470240	Y=8419286
3.	X=4470336	Y=8419275	7.	X=4470218	Y=8419218
4.	X=4470317	Y=8419285			

Նկարագրական մաս. Կաքավաձորի հանքավայրում հաշվարկվել են տուֆի պաշարներ ըստ կարգերի. A – 671.2հազ.մ^3, B – 876.8հազ.մ^3, C1– 3059.8հազ.մ^3, A + B + C1 – 4607.8հազ.մ^3, ԽՍՀՄ մինիստրների սովետին կից ՕՀ ՊՊՀ-ից 1972թ. հունիսի 30-ի N 6588 արձանագրությամբ հաստատվել է Կաքավաձորի հանքավայրի տուֆերի հաշվեկշռային պաշարներն /առ 01.01.1972թ., ԳՈՍՏ – 9479-69 և 9480-69 պահանջներին համապատասխան/ հետևյալ քանակներով (հազ.մ^3) և կարգերով.

- մինչև 200կգ/սմ^2 սեղմման ամրությամբ՝ A կարգ–671.0հազ.մ^3, B կարգ– 283.0հազ.մ^3

- մինչև 200կգ/սմ² բարձր սեղմման ամրությամբ՝ B կարգ–594.0հազ.մ³, C_1 կարգ - 306.0հազ.մ³:

«Ա-Քարավան» ՍՊԸ-ի կողմից հայցվող Կաքավաձորի տուֆերի բացահանքը զբաղեցնում է 1.35հա տարածք, նախկինում շահագործվել է այլ կազմակերպության կողմից: Նախկին մակաբացման ապարները հանվել և տեղադրվել են բացահանքի արևմտյան՝ շահագործված մասում: Տարածքում ներկայիս մնացորդային մարվող պաշարները կազմում են 89500.0մ³, արդյունահանվող պաշարները՝ 80.0հազ.մ³, իսկ շահագործման ժամկետը 16 տարի է:

Սույն նախագծով նախատեսվում է.

- հանքավայրի շահագործումը իրականացնել բաց լեռնային աշխատանքներով,
- արդյունահանել ուղիղ կտրվածքի քար, տարեկան 5000.0մ³ (արդյունահանվող պաշար) տուֆի զանգվածի հանույթով /5593.75մ³՝ տուֆի մարվող պաշար/,
- արդյունահանման աշխատանքները կատարել մեխանիզացված CMP– 026 քարհատ մեքենայի միջոցով, իսկ արդյունահանված քարերի իրացումը տեղում,
- մակաբացման ապարները պահեստավորել ժամանակավոր արտաքին, այնուհետև ներքին լցակույտերում,
- մշակված տարածության լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա,
- բացահանքի արտադրական հրապարակում բեռնարկղային տիպի գրասենյակի և կենցաղային սենյակի տեղադրում:

Ելնելով հանքավայրի երկրաբանական կառուցվածքից, հետախուզման մեթոդի պաշարների հաշվարկը կատարվել է երկրաբանական բլոկների եղանակով: Կաքավաձորի հանքավայրը բաժանվել է 4 բլոկների՝ բլոկ I – A, բլոկ II – B, բլոկ III – B, բլոկ IV – C_1:

1-ին տիպի բլոկների մոտավոր ելքը կազմելու է 42%, 2-րդ տիպինը՝ 10%: Մանր բլոկները, որոնք չեն համապատասխանում ԳՈՍ – 9479-69 պահանջներին, կարող են օգտագործվել որպես պատքար, իսկ թափոնները, որոնք ստացվել են բլոկների արդյունահանումից՝ խամ քար և թեթև բետոնի լցոն:

Հանքավայրի մնացորդային պաշարները նույնպես նախատեսվում է շահագործվել բաց լեռնային աշխատանքներով քարհատ մեքենաների օգտագործմամբ՝ 0.42մ բարձրությամբ աստիճաններով:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են.

- բացահանքի առավելագույն երկարությունը – 163.0մ;
- բացահանքի առավելագույն լայնությունը – 110.0մ;
- բացահանքի առավելագույն խորությունը (ամենաբարձր և ամենացածր նիշերի միջև եղած տարբերությունը) – 12.5մ;
- մակաբացման ապարների ծավալը – 3100.0մ³ /նախկին լցակույտ/ :

Բացահանքի շահագործման ժամանակ նախագծային կորուստները որոշվում են ըստ 2 խմբերի.

1. Ըստ լեռնատեխնիկական պայմանների կախված օգտակար հաստաշերտի տեղադրման եզրագծի բարդության աստիճանից և անկման անկյունից: Դրանք այն կորուտներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են՝ 8580.0մ³ (9.59%):

2. Շահագործողական կորուստներ, այս դեպքում նրանք կանխորոշվում են արդյունահանման տեխնոլոգիայից և ընդունվում են 500.0մ³ (0.56%) և բացող խրամի տակ մնացող կորուստներ՝ 420.0մ³ (0.47%):

Ելնելով հանքավայրի կլիմայական և լեռնատեխնիկական պայմաններից, տեխնոլոգիական նորմերից նախատեսվում է աշխատանքներն իրականացնել շուրջ տարի, տարեկան 260 աշխատանքային օր, օրեկան մեկ հերթափոխով՝ 8 ժամ տևողությամբ,

աշխատանքային ռեժիմով, ընդլայնական միակող, մանր ցածրաստիճանային մշակման համակարգով:

Հանքավայրը փաստացի շահագործվել է և լեռնակապիտալ աշխատանքների անհրաժեշտություն չկա: Կատարվելու են միայն որոշ աշխատանքներ ճանապարհների վերակառուցման և բարեկարգման հետ կապված և նախկին արդյունահանման ժամանակ արտադրական թափոնները բացահանքի վրայից հեռացման հետ:

Մակաբացման ապարները բացահանքի վերջնական եզրագծի սահմաններում ներկայացված են միայն նախկին ներքին լցակույտային ապարներով – 3100.0մ³ որոնք պետք է հեռացվեն և պահեստավորվեն բացահանքի արևմտյան մասում՝ նախկինում արդյունահանված տարածքում:

Ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները՝ 2910.0մ³/տարի կամ 11.19մ³/հերթ ծավալով, աշխատանքային հանքաստիճաններում բուլդոզերով տեղափոխվելու է 5.0-10.0մ հեռավորության վրա ձևավորվող արտաքին լցակույտ: Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները ձևավորվելու են նախկին ներքին լցակույտային ապարներից՝ 3100.0մ³ ծավալով և արտադրական թափոններից՝ 50460.0մ³ ծավալով:

Նախկին ներքին լցակույտային ապարները և արտադրական թափոնները սկզբնական շրջանում պահեստավորվելու են բացահանքի սահմաններից դուրս նրա արևմտյան մասում երկու լցակույտերով՝ N1 և N2: Շահագործման 9-րդ տարվանից սկսած՝ 1793.1մ բարձրության հորիզոնի շահագործմանը զուգընթաց, կատարվելու է ներքին լցակույտաառաջացում: Ներքին լցակույտ է տեղափոխվելու ինչպես շահագործման ընթացքում գոյացած թափոնները, այնպես էլ նախկին ներքին լցակույտային ապարները և զուգահեռ իրականացվելու է խախտված հողերի վերականգնում: Մինչ շահագործման ավարտը ներքին լցակույտեր կտեղափոխվի 46880.0մ³ ծավալ, իսկ շահագործման ավարտից հետո 6680.0մ³ ծավալի մակաբացման ապարներ: Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Բացահանքում գետնաջրերը բացակայում են: Բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումները ներ են ծծվելու բացահանքի հատակի տուֆերի ճաքերի և ծակոտիների միջով և հեռանելու է ինքնահոս կերպով:

Քարհանքի տեխնիկական ջրով մատակարարումը նախատեսվու է իրականացնել բերովի ջրի հաշվին՝ КО -002 մակնիշի ջրցան-լվացող մեքենայով, իսկ խմելու ջրի մատակարարումը՝ ШН-БЦБ -1.4 ջրի ցիստեռնով: Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով հաշվարկային ջրածախսը կկազմի 76.96մ³/տարի կամ 0.296մ³/միջին օրեկան, իսկ կենցաղային կեղտաջրերը՝ օրեկան 0.25մ³ ծավալով, լցվելու են անջրաթափանց բետոնային լցարանում, որտեղից էլ պարբերաբար տեղափոխվելու են սահմանված կարգով:

6800 x 0.5 = 3400լիտր Ջրի ծախսը 1.0մ² տարածքում փոշին նստեցնելու համար՝ ըստ նորմատիվների, կազմում է 0.5լ/մ²: Ընդհանուր տարածքի ջրցանման համար պահանջվող ջրի ծախսը կկազմի 3400.0լ: Ջրամատակարարումը կկատարվի պայմանագրային հիմունքներով:

Տարածքի հիմնական ջրային միավորը Սելավ Մաստարան է իր Սևջուր գետի աջ վտակով: Հայցվող տարածքից մոտ 140.0մ արևմուտք գտնվում է անանուն սաղր տաշտակաձև ձորակ, որտեղ ջրահոսք ձևավորվում է 2-3 տարին մեկ պարբերականությամբ, ձնառատ տարիներին ձնհալի հետևանքով: Գարնան վերջից մինչև խոր աշուն ձորակը անջուր է:

Ստորերկրյա ջրային հորիզոններ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել, ինչը հաստատվել է հանքավայրի տարածքում կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների, բազմաթիվ բացահանքերի շահագործման արդյունքներով:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո: Լցակույտում մակաբացման ապարների մնացած մասը՝մոտ 6680.0մ³ ծավալը, նախատեսվում է տեղափոխել 1785մ բարձրության հորիզոնում բացված 1260.0մ² մակերեսի վրա՝ 5.3մ բարձրությամբ, և հարթեցնել: Հարթեցման աշխատանքներ կկատարվի ընդհանուր 16820.0մ² մակերեսի վրա, որում ներառվելու են բացահանքերի ողջ մակերեսը՝ մոտ 10000.0մ², արտադրական հրապարակը՝ 250.0մ², ավտոճանապարհները՝ 3370.0մ², ինչպես նաև նախկինում տեղադրված արտաքին լցակույտի մակերեսը՝ 3200.0մ²:

Խախտված տարածքի լեռնատեխնիկական վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված հաշվարկները կկազմի ընդամենը 2075.3հազ.դրամ, ընդ որում 1.0մ² մակերեսի վերականգնման աշխատանքների համար՝ 123.6դրամ, իսկ մարվող պաշարների 1.0մ³-ի վրա՝ 22.5դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվելու է համապատասխան թեքություն, ինչը կապահովի թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- արտաթորվող վտանգավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի (ծխագազերի ֆիլտրներ) տեղադրում :
- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Կաքավաձորի տուֆի հանքավայրից տուֆերի արդյունահանման ընթացքում «Ա-Քարավան» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- նավթամթերքներով արտադրական հրապարակի հողերի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության

նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ: Վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերի փորձաքննության արդյունքները, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 21.01.2020թ. արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական N 59 եզրակացությունը, Կաքավաձոր համայնքի տարածքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները. նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում Կաքավաձորի տուֆերի հանքավայրի արդյունահանման նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Նախագծում ներառված են հոսքաջրերի հեռացման և մաքրման, աղմուկի մակարդակի, թափոնների հավաքման և դրանց հնարավոր ազդեցությունների մեղման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, խախտված տարածքների ռեկուտիվացիայի և մոնիթորինգի իրականացման բավարար միջոցառումները:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), ինչպես նաև հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը: Մոնիթորինգի արդյունքների չբավարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Անհրաժեշտ է ստանալ ՀՀ կառավարության որոշումը՝ հողերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ:
4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ա-Քարավան» ՍՊԸ կողմից ներկայացված Կաքավաձորի տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. Մասնագետ Կ. Մովսիսյան